

ներու միջեւ: Վարդանի յիշած ոսկիակոտ նկարս ծաղկոցին, որ ըստ իս ոսկիակոտ նկարէն ծածկող, օթոց, գորգ կարելի է վերծանել, առնուազն դոնէ ոսկեթել ծաղկենկար մեծադին դիպակ մըն էր, եթէ ոչ ոսկեհիւս, մարգարտաշար եւ գոհարադարգ գորգ մը, որ Անին արժած է: Արդ, կ'երեւի թէ Իսն Սալտունի յիշած եւ Հայոց տուած բնահարկ այդ 20 հատ գորգերն ալ Անիի համար վաճառուած գորգին կամ հիւսուածեղէնին նման մեծարժէք էին, եւ ատոնցմէ քսան հատ իսկ կը բաւէր գոհացնելու համար Արար տիրակալներուն համբաւաւոր ընչաքաղցութիւնը:

Իններորդ դարուն Արարացւոց Եղիտ ոստիկանին օրով, Բապուանի Ս. Գրիգոր վանքը կողոպտուեցաւ Արարներէն, այդ կողոպուտին մէջ կը յիշուի «զգեղեցիկ եւ դաւէտ չքնադատես սպասս աստուածակերտ խորանին, զոսկեղէնս եւ զարծաթեղէնս, եւ զըունակ զընակ երանդս առադաստին սրբութեան, եւ զհանդերձանս եւ զարկանելիս»<sup>(15)</sup>: Այսպէս Արարացիք միայն հարկով չէր որ Հայաստանի գորգերը կը տանէին, այլ եւ կողոպուտով: Ատենուան ընդունուած սովորութիւնն էր որ Արարացւոց աւարին առիւծի բաժինը Պաղտատի Սալիֆային մաս ըլլար: Այսպէսով Սալիֆաները տիրացան առասպելական քանակով եւ ճոխութեամբ գորգերու հաւաքածոներուն:

Նոյն այս դարուն Հայոց Սմբատ արքան (890-914) Արարացւոց Յուսուփ ոստիկանին հետ նուէրներ փոխանակեց: Հայոց տուած նուէրներուն կարգին կը յիշուին նաեւ «բարեվայելուչ եւ չքնադատես եւ երեւելի զարդս հանդերձանաց, եւ նկարակերտ կազմուածս բազմականաց կարմրութեամբ որդանց»<sup>(16)</sup>: Սօսքը անտարակոյս աննման հայկական որդանով իսկ ներկուած հյկական գորգերու մասին է, որոնք Արարացւոց նուէր կը տրուէին: Ինչպէս պիտի տեսնենք, Արարները գորգերուն չափ կը դնահատէին նաեւ հայկական որդան կարմիրը:

Դարձեալ Թովմա Արծրունի կը վկայէ որ Արծրունի Դերենկան տաճարին մէջ կային «բազմերանդ բազմականս ոսկեգարգ գահոյեցըն»<sup>(17)</sup>:

Իսկ Ասողիկ Աշոտ Ողորմածի (953-977) մասին կը վկայէ որ «Եւ այնքան առատաձեռնութեամբ բաշխէր կարօտելոց՝ մինչեւ ի մահուն իւրոյ ոչ ինեղ դրամ մի ի գանձատան նորս. այլ եւ զկապուտ զարդուցն եւ զբազմականացն եւ որմոց տայր կարօտելոց»<sup>(18)</sup>: Վկայութեան համաձայն, որուն ընդգծումները իմս են, ողորմասէր թա-

(15) Պատ. Հայոց: - Յով. Կաթղ. 1867, Երուսաղէմ, էջ 139:

(16) Անդ, էջ 250:

(17) Պատ. Տան Արծրունեաց, Կ. Պոլիս, 1852, էջ 301: Հմտ. Հ. Վ. Վ. Հացունիի ծաշեր եւ խնճոյք, Վենետիկ, 1912, էջ 54: Յարգելի Հայր Բազմականին տարբեր նշանակութիւն տուած է հոս, մինչ Բազմականի մասին վերը գրած ատենս ցոյց տուի որ գորգ կը նշանակէ:

(18) Պատ. Տիեզերական: Ս. Պետրբուրգ, 1885, էջ 181: Նաեւ Կ. Վ. Ծահնագրեանի հրատ. էջ 167: Հմտ. Հ. Հացունիի ծաշեր եւ խնճոյք, էջ 55, ուր այս անգամ Հ. Հացունի Բազմականը բարձ կ'ուզէ հասկնալ, մինչ զարձեալ գորգ կը նշանակէ: Տես Բազմականի մասին հատուածս: